

ՎԵՑԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՅԵՐԱՅԵՎԱՆԻ  
ՅՈՒՐԱԿՈՒՄՆԵՐ

# ԽԱՐԵՐԱԿ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շարաթ, ՓԵՏՐՈՒԱՐԻ 12 -ին. Թիֆլիս. № 7.



ԱԹԱՆ ԱՍԺԱԽԻԱՐԵԱՆ  
Վարձանկեցաւ Մասկայում 1910 թ. դեկտ. 20-ին:

Բ Ա Յ Ի Ա Մ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

1911 թ.

VI

Տարի

# ՄԱԹԱԲԱԼԱ

VI

Տարի

Երզրիժարանական-աստիրական պատկերազարդ շաբաթավերթի  
ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պիտական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծա-  
ւոր գործիչ-կորզիչներին և խայտառակիչներին:


Անհրաժեշտ քերք բոլոր քրիստոնեի համար

«ԽԱԹԱԲԱԼԱ» շաբաթիկն ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ  
ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Մտքազրկ կարելի է տեսնել, երբ քեֆերդ ուզի:

Հասցէն՝ Тифлисть Музейный пер., Редакция „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակող՝ Ա.Ս. ԵՐԻՑԵԱՆ



«ԽԱԹԱԲԱԼԱ»

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Տարեկան . . . . .	ՅԻՎՈՅԵՅԻՆ
Կէս տարին . . . . .	ՇՈՅՊՈՄՈՅԻՆ
Երեք ամիսը . . . . .	1 » 50 կ.
Ամիսը . . . . .	— 50 »
Թիֆլիսում տարեկան . . . . .	4 » — »

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՆԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ր.

Տարեկան . . . . .	12 ր.
Կէս տարին . . . . .	6 ր.
Երեք ամիսը . . . . .	3 ր. 50 կ.
Մէկ ամիսը . . . . .	1 ր. 20 կ.

100 տարով բաժանորդագրել  
ցանկացողին 75° զեղջ

Չրի կարդացողներին պէտք է նկարենք գլխի վայր:

## „Խարաքաչայի“ օրացոյց

1911 ՓԵՏՐՈՒՆ 28 օր

Օրերը կերպարեն խոյ գի-  
շերները կերպարեն ու-  
ճուրջները կերպարեն սուկ  
զատերի բոլոր կերպարի,  
բոնց ազգերու, թեւեւ ուսկ  
հոնքի կերպարի

# 12

Суббота ՉԵՐԿՈՒՆ ԳԻՅՈՅԻՆ ԳԻՅՈՅԻՆ

Հունիսի 27

## ՄԻԼԻՈՆՆԵՐՈՒ ՃԱՄՓԻՆ \*

Իս ու Սամսոն Չէրքէզովը, վունց վուր ասի, գնացինք Մանթաշովի կան-տորէն:

— Սովէշատելի օթախը բաց է, հարց-րինք:

— Բաց է, բաց է, ասին ու տուն մը-տանք:

Էնչախնէնթ դուս պրծան դերեխտուր-նիրը, մէկէլ մէ մինձ ու արքեպիպկո-պողի միրուքով բուղալտիրը. — այ կաթ-դիկուսացու մարթ, Աստուձ գիգենայ, հետտի միրուք ունէր, վուր թամամ կաթիկուսին արժանի:

Հարց ու բարով արինք. իժուձ ասի, վուր էկիլ իմ, ասի, Մանթաշովի հու-րիրը առնի, պսի, թէ խիլք ունին, թող տան, չունքի փուղը նաղդ իմ բերի, ասի:

— Հանաք խօ չիք անում, կօտէ, — ա-սից մինձը:

Էտ ինչ խօսի է, ասի, հանաքը ա-ուուտուրի մէջ ո՞վ է իմացի, ասի ու աւելցրի, — գուզիք փուղերու տիղն էլ շանց տամ, ասի:

— Չէ, կու աւտանք, կօտէ:

— Վուր շատ չխօսինք ասի, նաղդ է, նաղդ քիչ տամ, ասի:

— Բասն ու հինգ միլիօն, կօտէ:

Էս խօսկը վուր ասից, իս մէ քիչ փիքը արի, չըլի հանաք մանաքնիր է անում, ան մասխարա է գցում, ասի, ու մէբաշ հարցրի. — պակաս չիք տայ, ասի:

— Վունց պակաս, այ հետաքը տիս, ապրանքը լաւ տնդդէ ու էնէնց աուու-տուր արա, կօտէ:

Չէ, ասի, իս խօսմ դէն ածելու փու-

ղիր չունիմ, վուր քսանուհինգ միլիօն փուղ բերիմ, ձիգ ձիւր հուրէրուն տամ ասի, հէր օխնածնիրը, էդ դղամ փուղ վուր բանդ անիմ, էդ խօ նաւթու-խումն էլ նաւթ կու լուս գցիմ, ասի:

— Չէ, պակաս չինք տայ, կօտէ, խա-ղէյինը կու շիգրի, կօտէ:

— Սաղէյինը վուր իմանայ, թէ իս իմ առնում, ով գիդէ մէ բան էլ գլխիցը պակսեցնի, ասի, չունքի նաղդ փուղ իմ բերի, ասի, համ էլ քաղկցի, ու հայ քրիստոնայ մարթ իմ ասի, իս խօ մի-թրեուլ մօթրէվուլ չիմ, ասի:

— Չէ, պակաս չինք կանայ, կօտէ:

— Վայ դարդիս, թէ չիք կանայ, — ինձ ու ինձ փիքը արի, փուղը վուր վրէս է, էլ ինչ դարդ ունիմ, ումը շանց տամ, վուր դիրամալա չկաղնեցնիմ, — թէ վուր էտենց է, ասի, ձիւր խասիա-թը, մաշ փիքը արէք, ասի, էգէբա ձիւք է տալի, իժուձ ինձ իմաց արէք, ասի, ու ամենքին ձեռք տւի «պրաշչայ», ասի ու փիքը անելով դուս էկայ, — վայ դարդիս թէ չիք տայ, էս փուղով կանամ մինչկի Պետ-րեուլս երկու շէր գնայ ու գայ, հա-մա նաւթի հուրիր վուր առնիմ, ի-ժուձ էդ հուրերու մշակներու ու պրի-կաշիկներու դաւի դարաբէքը տիս, դապաստովկէքը... իժուձ թէ վուր պաժար ննգնի ու նաւթը մէբաշ էրի, է... էտ խօ տունքանդուլիին է, ասի, չէ, չէ խիպէր, ասի, էտ ինձ ձեռք չի տայ, ասի, չունքի նաւթի բանը էս թաւուր է, վուր մարթ խիտ մուղայիթ պիտի ըլի — ու գուս էկայ փողոց. էտի ուստ էկայ մէ լաւ ճանաչիս, թաղա դոխտուր ձուղուրովին — սա էլ լաւ տղայ է, սրանք ասկուտակով լաւ մարթիք ին, խա-սիաթն էլ անտիկա է. ասկասէրուլի-

«ԽԱԹԱԲԱԼԱ» ՕՐԱՅՈՅԻՆ

13 փետրւարի (կիրակի). — Հայ մամու-լը երկունքի մէջ է, ինչպէս երևում է մի արու գաւակ է ծնելու:

14 փետրւարի (երկուշաբթի). — Մշակը կը յայտնի իր՝ կաթողիկոսական թեկնա-ծուի անունը:

15 փետրւարի (երեքշաբթի). — Սմբա-գրի հիւանդութեան պատճառով «Կայծե-րի» յաւելածը լոյս չի տեսնիլ մի քանի շաբաթ:

16 փետրւարի (չորեքշաբթի). — Կըսկուի միջնորդ դատարանների սեղոնը:

17 փետրւարի (հինգշաբթի). — Այսօր կէսօրից յետոյ օրը կը սաքանայ, ով փայտ չունի. թող ուրախանայ:

18 փետրւարի (ուրբաթ). — Վաղը կը-կայանայ Կ. Տ. Ընկ. երեկոյթը:

Յիշատակարան

Եթէ ցրտերն այսպէս շարունակեցին, հաւա-նական է, որ Մշակ-Նորիդանական կուրը շա-րունակի մինչև գարուն:

Աստղագէտ — տոմարագէտ և օրացոյցագէտ  
Փարիմուզ

\* Տես Սաթ. № 6.



նր միլիոններ ածէ, մէ խօսկով էլ ինչ ասիմ, ով մարթու տալու ախչիկ ունէ՛ իրան տւէք, չիք փոշմնի:

Հա էն էի ասում, սրան վուր տեհայ մօղեցաւ ու տաք-տաք ձեռք տւից:

—Պարուն Գասպարը էստի՛, Բաբ-ւում—ի՛նչ է շինում, կօսէ:

—Էկիլ իմ մէ քանի նաւթի հուրիլ իմ ուզում առնի, ասի:

—Մի առնի, թէ Աստուծ կուսիրիս, կօսէ, զարար կօնիս, կօսէ, կտար կու-նրնգնիս, կօսէ:

Աստուծ վուչ անի, վուր կտարը նրն-գնիմ ասի, փուղս վրէս չի՛, ասի. ու-րիշ գուրձ կու բռնիմ ասի:

—Մաշ խաթարալութի՛նը, նրա կու-սացկութի՛նը:

—Հէր օխնած, խաթարալութի՛նը իրա տիլը ունէ, փուղ դադիլը իրանը, ասի:

—Չէ գէթաղւայ, կօսէ, չէ մի ա-նի, կօսէ թէ չէ կու գօւրիս, կօսէ, էս-տի վուր էկիլ իս՝ Չաւէն հայր սուփին տեհիլ իս, կօսէ:

—Չէ, ասի, չիմ տեհի, Չաւէն հայր սուփը ո՞վ է, ասի:

—Վա՛, հէր օխնած, գալիս իս Բաբու ու նրան չիս տեհնում, էտ էլ հայու-թին է, կօսէ, ուզում իս բան բռնէ, էթան ձեռք գցէ, գնա նրա հիդ մէ քիչ փիքը արա, կօսէ, համ էլ՝ մաշ հայ քրիստոնութի՛նը վնւրդի է, կօսէ:

—Բաշպորտս էլ հիդս բերիմ ու շանց տամ, ասի, վուր հայ քրիստոնայ իմ:

—Չէ, հարգաւուր չէ, կօսէ, իս ին-քս քիզ կու տանիմ, կու շանց տամ նրան, կօսէ, մէ հետտի մինձ մարթ է, վուր սաղ ենգիդունիում չկայ, կօսէ:

—Բիլէթ պիտիք առնի՛ ասի:

—Ի՛նչ բիլէթ:

—Նրան տեհնելու համա, ասի:

—Ինչ հարգաւուր է, կօսէ:

—Վա՛, մաշ էդ թաւուր մինձ մարթ-կերանց անփուղ կանանք տեհնի, ասի:

—Իս բանը գլուխ կու բերիմ, կօ-սէ, ու թեկիցս բռնած, քուչա քուչա ման ածեց:

—էս խօ տեհնում իս սա Պարա-պիտն է, կօսէ:

Վնւր կարապիտը... էպիսկոպոսը, էն վուր դալմադալ սարքից, թէ՛ Շիրի-նենց կարապիտը՝ էն շէկը:

—Կարապիտ կի չէ՛, Պարապիտ, կօսէ, ա՛յ, սա էլ Չաւէն հայր սուփի օթախ-նիրն է, կօսէ:

Մէ մաշաւած սանդուխտներով բար-ցրացանք, զւանդիլը քաշեցինք, մէ պատիկ բիջ դուս էկաւ ձեռին մէ դու-ժին խորովածով շամփուրնիլ բռնած: Հայր սուփը, կօսէ, ճաշ է անում:

—Ուրիշ ո՞վ կայ էնդի, հարցրից իմ դօխտուրը:

—Օչով չկայ, մէնակ ինքն է, կօսէ:

—Բա էդ դգամ խորովածը ո՞վ պի-տի ուտի ասմէ:

Հայր սուփը, կօսէ, ի՛նչ է, շատ է —օրէկան կէս փութ միս ու մէ փութ հաց է անուշ անում, կօսէ, էսօր մէ քիչ բէքէփ է բայ ի՛նչ կուլի, կօսէ:

Իս յիդ գնացի, ասինք՝ իժում գու-քանք—էտենց էլ արինք, իրիգնապա-հին էս դօխտուրիս հիդ էլի գնացինք, ու ձիւր արեր հետտի մէ գոռա մարթ էր վուր դուրթ վուր ածէր տեհնիլը, վուր պակասը ասիմ բօյ ու բուսա-թով, պատիկ Մասուսից մինձ էր. մի-րուքն էլ առակների մէջ խօսմ լսած կաք, մինչկլի փուրեմէն ներքե...  
—Դուք ո՞վ իք, կօսէ, դուք փսակ-ւելու հրամանք գուզիք, թէ կնգամէն բաժնւելու, տեղից վէր թոչելով հարց-րից հայր սուփը:

—Վունց վուր ձիւ կուտայ, ասի, իս ասկասէր, համ էլ առուտուրական մարթ իմ, ասի, էկիլ իմ Բաբու Ման-թաշովի հուրիլը առնիմ, թէ տեհնիմ, վուր էստի մէ էնթաւուր Չեհել ադ-չիկ, ան վորփեվբերի, ան մարթաթուղ կինկ կայ, վուր լաւ փուղ ու բաժինը ունենայ ու բուր-բուր էլ նաւթի հուրիլը, էթ թաւուրի վրայ կու պակելիմ ասի, քիզ էլ լաւ աշամբուր կուտամ, ասի, համա թէ տեհնիմ վուր կնիկս...  
—Հա հասկացայ, Աստուծ օխնէ, կօ-սէ, էտենց էլ իս իմ փիքը անում, կօ-սէ: Անելիմ ժուգ նստից ու փիքը ա-րից, իժում վրէս նայից:

—Համեցէք գէթաղւայ, ի՛նչի իք կադ-նած մնացի, կօսէ, հէր օխնած, վուր դունիից իք հրամանք արի, շնուրք բերի, կօսէ:  
—Իս թիֆլիգեմէն իս, միր պետլած քաղկիցը, վագլուլը էրէզ էկայ, ուզում իմ նաւթի հուրիլը առնիմ, ասի, համա թէ տեհնիմ վուր ուրիշ բաներու մէջ էլ դադում կայ, ասի, էն էլ կու վի-կանիմ, ասի:  
—Աստուծ օխնեցէ, լաւ իք փիքը արի, կօսէ, ձիւր ասկը վունց է կօսէ:  
—Գասպար կալատուղովեանց, խիստ ասկասէր իմ, ասի:  
—Ո՞վ, Գաս... պա...ր կա...լա... տուղովեանց. հէր օխնած, հրամանքդ դուք իք, կօսէ, ինչի էլ խաթէլէթ շա-սիք, կօսէ, թէ էդ թաւուր փիքը ու-նէիք ու սրան էլ իմացում չարիք, կօ-սէ, գլխիս վրայ, ի՛նչ վուր գուզիք, կուլի, կօսէ. մէ էս խալխին էստղանց ուղ անիմ, կօսէ, իժում քի հիդ լաւ բաբաթին խոհուրդ կօնինք, կօսէ, էս խալխը վուրը փսակի հրամանք, վուրը ա-մուսնաթողութենի համա ին էկի, կօսէ:  
Մտիկ տւի տեհայ, վուր մէկէլ օթա-խումը մինչկլի երկուհարիլը... վուր շատ սուտ ասիմ, մարթիք ու աղջկիլը կէին մէջը պառաւ, Չէհէլ խառը:

(էլի կուլի)

Գասպար կալատուղով  
հարաբալա ամենայն հաւուց

ԻՐԱՆ-ԹԱԻՐԱՆԻ ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ՄԵՐ ՈՍՏԱՆԱՆ-ՐԻՆՆԵՐԻՆ

(\* Նէր գեատակ քերթող մեր ոստանաւ-րիչներին)

Ի՛նչ մանաքը քամի փչեց,  
Մեծ Բեափանակ մեծ ցաւ գցեց:  
Իմ պատմածս դեռ շատ վաղ էր,  
Մեր գեղն նարուստ՝ քէֆը չսող էր.  
Ու լաւ մարդիկ, շարա՛ն, շարան—  
Մատը հողում տեղաւորան:  
Օղորմի ասնը նրանց մասին՝  
Որ հասցրին այս օրնասին:

Չունենք մի մարդ արժանաւոր,  
Լինի համեստ մեզ գատաւոր.  
Հասաւ օրը, պէտք է նորը  
Եւ գեղացուն՝ զլաւնացու:  
Բայց ինչ արած, երբ վերանա  
Մեր գեղերում հէջ մարդ չկայ.  
Գլխը Մարծն տալիս էր ձայն  
Ազմկալից.—Ա՛յ գեղական  
Հայ ու հարս, շուտով արէք,  
Դլաւնացու ձեզ մարդ ճարէք.  
Ընտրութիւն է, նոր վաղա է.  
Աղա մարդ է, թէ զեղա է,  
Օյեաղ մարդ է, թէ հարբած է,  
Խելքի տէր է, թէ թմրած է,  
Միայն բերէք, լաւը ընտրէք,  
Ճամբի դրէք,  
Ում որ կուզէք՝  
Նրան արէք»:


Այսուհետեւ չորս բոլորից՝  
Գեղից, սարից, հանդից, ձորից  
Իրար յետեւ երամ-երամ,  
Թոփ-թոփ ելան՝ միաւորան,  
Կազմին ժողով տեղաւորան:  
Պէտք է ընտրէք մի գեղապետ,  
Ազնիւ, գիտուն՝ փորձով վարպետ:  
Խալխը աշին՝ օրը ճաշին  
Ո՛ւմը ջոկին, մազը պոկին:  
Շունը մոտած:  
Էջը գնաց:

Հարահրոց, փէտ ու բրոց,  
Զիլ զոռգոռոց, աղմուկ, որոտ,  
Չունենր արնոտ, պատառձ գլուխ,  
Չուլ արխալուղ սոսջ եկան  
Մտան մէյգան:  
Ճարը կտրաւ,  
Խիղճը կանգնաւ  
Ու հարց արաւ:


էլ մարդ չունիք արժանաւոր,  
Բերէք ջոկէք ձեզ դատաւոր:  
Մէկը գեց, լաւ է էջը,  
Որ չի ուզիլ ձեռ փէշքէջը:  
Մի ուրեջը գովեց շանը,  
Որ ապրում է իր դոտանը:

\*) Այս ոտանաւորը գրել է մի անուանում գիւ-ղացի, ապացուցանելու մեր քերթողներին, որ ոստ-նաւոր գրելը մի «գատ» չէ: Խմբ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ԺՈՂՈՎԱԿԱՆ  
ՊԱՐԹԵՆԱԿ



ՈՍՏՈՅ



Չորս բուրբից բացին բերան,  
Մեր վեց գեղը եկաւ վերսն.  
Մէյզան բերենք էջն ու շունը,  
Բանդենք գեղերն ու մեր տունը...  
Շունը տարաւ թաթը լզեց,  
Ամեն կողմից բանը դպեց.  
Գեղապետի պաշտօնն առաւ,  
էն օրւանից աղա դառաւ  
Ու գեղապետ,  
Եւ գողապետ:

Նալի-կարպետ, մոզի-ոչխար,  
Ալիւր-ամբար, միս-խորոված,  
Հաւը տապկած, գինի, արաղ,  
Գէր գառան միս, չաղ-չաղ մատաղ,  
Ոսկի-արծաթ քանի՜ շարան  
Եւ ամանաթ, թալան-թուրան՝  
Ծէրը հասաւ մինչև Իրան:  
Որդ մեր խալիւր ճարը կտրած՝  
Բողոք արին լացակամած.  
Աղբէր, թախեց գեղապետը,  
Ով շուն ծնաւ՝ և կապրի շուն,  
Հող ու մոխիր մեր արևուն:  
Նշանն առան սրա վզից,  
Հեռացրին ասպարիզից.  
Սևաւորաւ, փախաւ կորաւ:  
Մի շան ձեռով՝ հազար բեռով  
Ցորեն գարի, բերք ու բարի  
Կորաւ, գնաց, ոչնչացաւ  
Ու փչացաւ:

Էլի կազմեն նորից ժողով,  
Շատը մորթով, շալկին կողով  
Եւ դիմեցին կռաւարչին,  
Դիւանխանին ու խնդրեցին,  
Աղաչեցին.—  
Այժմ ընտրենք մի քիչ լաւը,  
Դեռ քաշում ենք էն շան ցաւը.  
Լինի եղը, լինի մողին,  
Մենք յօժար ենք անգամ խողին,  
Լինի շորին, լինի էջը,  
Մի խելօք մարդ՝ թէկուզ գէշը:  
Շան ու գիլու լաղաթն առանք,  
Մեզ խորովին ու լաւ վառանք  
Եւ համ չառանք:  
Ու խալիւր խառ,  
Ու կոճ ու թշառ  
Ոչխար ու գառ  
Բոբոացին,  
Ձիւ բոռացին,  
Ճանճ ու բզէզ,  
Օձ ու խլէզ  
Էլ ինչ հայաւն,  
Թոչուն գազան՝  
Բղաւեցին միաբերան:

Կուզենք շինել այս անգամին  
Մեզ գեղապետ էջ խնամին:  
Նշանն առան՝ վրէն կախին,  
Պատիւ տւին էջ ախմախին:  
Էջը բազմեց բարձր աթոռ,  
Որ չէր տեսել նա թոռէթոռ,  
Հպարտացաւ, գոռոզացաւ,  
Ու հաստափոր մեր խնամին

Նշան ունէր, թէ շոր հագին՝  
Հանեց թափեց՝ դունչը ցցեց,  
Պուչը զեց,  
Ասականջները մի լաւ զլած՝  
Հօնքիւր, հօնքիւր զիլ զիլ գոաց  
Չոաց, տրախիկ  
Տաւալ, փախաւ  
Ոտը ծակեց,  
Կեխը ծռեց,  
Կտրեց դոլան՝  
Կորուց փալան՝  
Գնաց պարկաւ  
Աղբի վերան,  
Երգ յօրինեց,  
Ոսեց այան.

Էլ չեմ ուզում լինել իշխան,  
Դիւանխանաւ և էլ անբան,  
Կամ դատ արդար ու դատաստան:  
Ե՞րբ էք տեսել՝ էջ դատաւոր  
Ունի ու խրատ շնորքաւոր,  
Թէ այդպէս է, մնաք, բարև  
Էլ չէք տեսնի օր ու արև.  
Ձեզի մնաց մեռնելու ճար.  
Երբ որ չունիք կեանքի հար,  
Վերջի տնքոց  
Ու մի մաշտոց  
Եւ մի հոգոց:

Մովսէս Ղազարեան



Լացած շապիթը

Առաւօտեան սովորականից ուշ էր արթնացել շուրջերի Մրգըխանանց Օհանէսը, սեղանի առջ կզացած նայում էր փոքր հայելու մէջ իր փոս ընկած աչքերն ու երկար մազերը տեսնելու, որ անկանոն թափւած էր ներս ընկած, բայց լայն ճակատին:  
Օհանէսը նախընթաց երեկոյեան էր գիւղը հասել թիֆլիսից, որտեղ նա ծառայում էր: Նա հազնւած էր եւրոպական հագուստով, ունէր և օսլայած սպիտակ շապիթ: Լացեւելուց և սանրեւելուց յետոյ նա կանչեց մօրը.

—Մայրիկ ձեր է շապիթս, տուր հագնեմ:  
—Քիւ մէրը քեօռանայ որդի, էնքան քրտնել էիր վէր, շապիթդ կօթ էր կտրել, տարել եմ ճուրը ըղողել, թոռնումը կախ արել... տէղդ մտի քը մատանդ, կմրսիս... վերդի-վէրա հրէս կըչըրանայ:

Անզուրուկին

—Միշա, ինչո՞ւ այդքան սիրում ես Վալոդիկին, նկատեց կինը ամուսնուն, երբ վերջինս՝ անվերջ համբոյրներ էր դրոշմում աղախնի երեխայի այտերին:—Երևի նրա համար, որ դա նման է մեր Շուրիկին:  
—Ոչ, սիրելիս, ոչ... չէ որ Վալոդիկէն մեր Շուրիկի մեծ եղբայրն է...

Ժօրձ



ՀԱՍՑԷ ԲԱՐԵԻԱԳԻՐՍ Ի ՔԱՂԱՔԻՆ  
ԲԱԳՈՒ, ՄԱԽՍՈՒԶ ԱՆԳՈՐԱԳՆԵՐՈՒ  
ԱՂԱՅԻՍ ԶԵՆՈՂ

Գարագաշ սողա ջան.

Արևիդ, ումբիդ դուրբան, դավիդ ծէրին դուրբան, գարաղի խօսքերիդ դուրբան: Աւալի սըֆթայ հարց ու բարով կենիմ, հրամանքիդ հալ ու քէֆը հարցնիմ կը ու արևաշատութիւն խնդրիմ կը հրամանքիդ հմար, օր շատ ապրիս, լաւ ապրիս, լաւ գրիս, ծուռն ու շիտակը դղիս, յանկջնեբուն բուրթը հանիս: Մենք ալ, փանք Բարերարին Աստծոյ, ողջ և առողջ ենք, ես վանջ հավանջ դալայինք կը: Ժանգոտ ամենբը բով բով ին, օրական 40—50 դազաններ թափին կը խանութս, մանտր մուստր փարխաջ մարխաջ սիթիլ միթիլ, թավայ, ես մաղ... ասպէս ամենին ալ հէսարէ դուրս ին: Փանք Աստծու, գործ շատ կայ, փարայ չկայ, խէր ու բարաքեաթ չկայ: Վէրբան օր դալայիլ իմ, բիթուն նիսիս է մնացիր, առնելիքներս գրիր իմ քիւֆուրի դաֆթարը. օրը մէ հեղ կարգամ, հախս ուտողներին կորչնիմ ու դաֆթարը փակիմ կը: Աստնք հլտ մնան, ես հրամանքիդ հետ յուրիշ խօսելիք ունիմ: Հրամանքդ «Մշակ»-ի 12 նօմերին մէջ գրիր էիր թէ՛ «Բազում քիսասդութիւն է. դրամ չկայ, մարդիկ օգով են կերակրուում»: Աս խօսքերից կերևնայ, օր աղքատցիր ին. ես վաշ ես վաշ չուլ ու փալանները գալով պիտի դնին, հաց ճարին ուտին: Տեղն է ատոնց: Վախթովմ Սօթոմ-Գոմոր քաղքըններն ալ օսկու արծթի մէջ լող կուտային, քաղաքավարութեն, մարդկութեն, ապուռ հաեայ, ամօթանք... բիթուն շուրը դրին, ատոր հմար ալ Աստուած յերկնքից կրակ թափեց ատ քաղաքները վառեց: Հիմի սրէն Բագլին է էկիր: Վախթովմ դուք ալ օսկու արծթի մէջ լող կուտայիք կը, փարան սև խուրմի պէս խարջէիք կը: Մէ էրիկ մարդը տասը կնիկ պահէր կը. չախալ աղջիկներուն շամբանիայի մէջ լողընէիք կը, գաստինիցի նօմերուն մէջ 25 նոցը աղջկայ ճակտին կպցնէիք կը: Բագարայի մէջ հազարներ կերթար գուգար: Գիշեր ու զօր դավուլ դուռնով քէֆ կէնինք կը: Հիմի ալ գագէթներուն մէջ գանգատ կենիք թէ «դրամ չկայ, քիսասդութեն է, բագուցիք օդ կուլ կուտան կը»: Հիմի ըսէ տեսնիմ վէ՛վ է մեղաւոր: Դէ ասիկ ձեզի խրատ, էլ չցանիք կուտատ, յոտնիքը եօրդանի գեօրայ յերկընցնիք: Դէ մնաս բարով, յերկեն արև յըլլիս, հէչ ախ ու վախ չէնիս. հողը բըռնես օսկի դառնայ: Խնդրիմ կը օր տէր հօրըս սուրբ յաջը համբուրիս իմ տեղակ, ճանչիս կը տէրտէրիս, Գարէգին քահանայ Ղուկասեանցին: Աստուած բանն յաջողէ, շատ, շատ լաւ մարդ է. շատ իմ կարօտցիր: Ըսէ թող քարոզէ, խրատէ ժողովրդին:

Հրամանագր խ. ծ. Ղալայի Մարգար

Խորհն-Ժան-ղը-Բիւլ.

Ջանմ, առ վեր տէրաէրն է քեզի կնքիր, օր անունդ առպէս կտոր կտոր է էրէր: Ջանմ. համ Խորէն, համ Ժան, համ Դը, համ էլ Բիւլ: Աս ինչ խաբար է. առքանը քեզի հասնիլը: «Սաթարալի» 4 նօմերին մէջ հարցնիս կը թէ՛ «Ղալայչի Մարգար, Բագլից թագայ մօղնի մաղմաղէլներ (լաւ չիմ հասկնայ, հմա վարավուրդ կենիմ օր մաղմաղէլը ազապ աղջիկ պիտի յըլի) ղըր կիմ քեզի նալօթնի-պլատեժով, շուտ դալայէ ու հետ ղրկէ»: Բաշուտայ, Խորէն ջան. հմը նալօթը ջէպըդ դիր, ես նաֆիլա փարայ չունիմ ջուր ցկելու, ընդ ցնի պասիլկայ շինէ ու ղրկէ, անպէս դալայիմ օր՝ ըսիս բարիքեալա:

Ղալայչի Մարգար



Նիւր օր. Հ. ԹԱՐ-ԻՆ

Ինչո՞ւ է, քոյրի՛կ, կուրծքըդ սգաւոր. Ինչու աչքերըդ գեախն են յառել... Խեղդե՞լ է նրանց արցունքը պլտոր, Թէ՞ շատ ես լացել, ուժդ է սպառել:

Ինչո՞ւ է ծաղիկ լեզուդ անվրդով՝ Անօրեւող աշնան թախիժ երագում. Ինչո՞ւ՞ շրթներիդ տառապող ժպտով, Ասում ես. «Ծանր է... զգալ չե՛մ ուզում!»

Մի՛ ասիր, քոյրի՛կ... իղձերըս անցել, Վա՛րդ է մեր կեանքը արցունքը չորցել. Բայց մենք դեռ կուլանք, եւ կեանքը գաղտնի

Այդ արցունքներում վառող իղձ ունի...

Մի՛ ասիր, քոյրի՛կ... չա՛ր է այդ լեզուն. Նա կըխորտակի կուրծքըդ երագուն.

Մենք պէ՛տք է սպրնէք, այն իղձն է կանչում,—

Բայց... ծա՛նր, երբ դատարկ կուրծքն է նստաչում:

Արխիպ

ԱՆԳՈՐԾ ՄԱՐԴՈՒ ՄՏՔԵՐԻՑ

1. Գրպանդ արդարութեան ծուղակ է երբ լիքն է, գուն էլ ամեն բանով ճշմարիտ ես, իսկ եթէ դատարկեց... ոտից մինչ գլուխ սուտ ես:
2. Աղքատութիւնը միակ լուծն է, որը աւելի է ծանրանում, երբ քաշողներ թիւը շատ է:
3. Հազար ճանապարհներ մարդկանց տանում են դէպի գայթակղութիւն, իսկ դէպի ճշարտութիւն—միայն մէկը:
4. Որսորդը եթէ ուղիղ ճանապարհով գնա, երբէք որս չի անի:

5. Մի բարեգործ—հազար չարագործ:
6. Հարստութեան ճանապարհը հարուստը կիմանայ:
7. Ոչ միայն տէրտէրները, որդերն էլ են ուրախանում, երբ մի հարուստ է մեռնում:
8. Աղքատի համար հարուստի սեղանը անմատչելի է, բայց վերջը երկուսը միասին միեւնոյն սեղանի կերակուրներ են:
9. Հարուստը աղքատի հետ չնստեց, բայց վերջը կողքին պառկեց:

Մ. Աղայեան

Ա Ռ Ա Մ Ն Ե Ր

1. Ծերութիւնը յիմարութիւնից չի ազատում մարդու:
2. Ծերն օրացոյցը իր մարմնի վրայ ունի:
3. Բարի ծերը չար ջահիլից լաւ է:
4. Ծերութիւնը պիտի յարգել, իսկ ջահիլութիւնը՝ խնայել:
5. Ծերութիւնը նման է հիւանդանոցի, ուր ամեն տեսակ հիւանդութիւն ընդունում է:
6. Ով ծերութիւնը չի յարգի՝ ծերութեան արժանի չէ:
7. Դիշերը ոչ ոքի բարեկամ չէ:
8. Ամբողջ գիշերը հարբելն էլ արթնութեան նշան է:
9. Ով ուրախ գիշեր է որոնում, ցերեկն էլ կորցնում է:
10. Յիմարին ձուի վրայ չպիտի նստացնել:
11. Երբ Աստուծ յիմար է ուզում ունենալ, ստեղծում է այրի կին:
12. Կարիքը երկաթ է կոտրում:
13. Կարիքը օրէնք չի ճանաչում:
14. Կարիքն ստիպում է աղօթել:
15. Կարիքը պառաւներին պար է սովորեցնում:
16. Ուր կարիքն ամենամեծ է, օգնութիւնն աւելի մօտ է:
17. Զիթենեաց լեռը խաչից զարնուրելի է:
18. Զիթենեաց լեռից իջնողը մահւան յաղթում է:
19. Շատ իրատունքը մարդու սարուկ է դարձնում:
20. Ով իրաւունքով է ուզում ստանալ, պիտի կուռլ էլ իմանայ:
21. Իրաւունքը տրամադրութեան զեւպանն է:
22. Հոովմը մի օրում չեն շինել:
23. Հոովմ շատ ճանապարհով կարելի է գնալ:
24. Որքան մօտենաս Հոովմին՝ այնքան վատ քրիստոնեայ ես:
25. Հոովմում լինել և պապին չտեսնել:
26. Եթէ կայ դժոխք, Հոովմը նրա վրայ է շինած:

Առակախօս



ՍԻՐԵԼԻ ԳԱՍՊԱՐ

ԱՂԱ ԿՄԷԼԻՑԻՆԵՅԻՎԱՆ

Քանի մը օր է, զի անբաժնէլս գործով եկեալ եմ Պարսկաստանէն ի Պոնտոս և քանի մը օրէն վերադառնամ կրկին Իրան և Թուրան: Ճանապարհին հանդիպեմ Ձեր սպասին և մատուցանեմ Ձեզ յարգանքս: Ներկայիս ուղարկում եմ մի մանրավէպ, յուսով եմ գերկումն էլ կըտեղաւորէք ի մէջ «Սաթարալային»: Ամենքեան կուսակցութիւնն այժմ պոսպագանդ՝ աւնեն վասն ընտրել տալոյ իրենց ընտրելին ի գահ կաթողիկոսութեան, ընտէր «Սաթարալա» ոչ պատրաստէ խաւար միտք ժողովրդեան: Եթէ տպէք պատկերն իմ ի մէջ «Սաթարալայի» աղամանդեայ խաչօք ի ճակատս և շրջապատեալ վարդապետօք և եպիսկոպոսիք (ոչ մոռանայք զԴեօղալ Աղարաջին, որոյ կարգեմ մայրապետ ամենայն հայոց) և պոսպագանդ արարեալ վասն իմ, յաջողէք հատուցանել զիս ի բողձանս, խոստանամ առաջին կոնգակն իմ հանել ի վերայ հոգևորականաց, որ յիտ այսու փոխանակ «Արարատի» ամենքեան՝ քահանայք, սարկաւազք, տիրացուք և մղպիք բաժանորդագրէին «Սաթարալայի» և թիւ բաժանորդաց հասանէ 15,000-ի, որով փոխարինեալ լիցի ջանքն և աշխատանքն Ձեր:

Ես մեռանիցեմ (ման օրում), Գասպար աղա, այս նամակս գաղտնի պահես, զի ոչ անկցի ձիւք մեր հակառակորդաց, որով խանգարեն զիմ ընտրութիւն: Հոգուդ մեռանիցեմ, սիրելիդ իմ, տկող գլխովդ պտոյտ գայցեմ. ջանայ և աշխատիր, գուցէ աջողիմք: Ամենայն օր երազին տեսնամ ճակատս զարդարեալ ականակուռ և ճաճանչափայլ խաչիւք. Աստուծ ի բարին կատարէ—ամէն:

Կո ճնդիկ Աբեղայ




Թ Ա Տ Ր Ո Ն

Առնասարակ վաճառականները երբ մի գործ են բնում, կամ մի տեղ խանութ բանում, մի քանի ամիս այդ գործին նայելով, կամ խանութում նստելով, երբ տեսնում են, որ յաջողութիւն չեն ունենում, թողնում են այդ գործը, կամ փակում խանութը և մի այլ գործի կաշում, կամ մի այլ տեղ խանութ բանում:

Բայց ինչ են մտածում մեր բեմացաւով վարակեած հայ երիտասարդները, երբ իրենց մէջ ոչ մի բեմական տաղանդի բացիլ անգամ չսկսատելով, չեն կամենում ազատել բեմը իրենց ներկայութիւնից, որպէսզի տաղանդաւոր ու փողոցում մնացած լաւ ու հմուտ սիրողները գրաւեն այդ տեղը:

Եթէ նրա համար, որ իրենց ծնողները հարեաններին զարմացնելու համար ասեն, թէ «միւր տղէն զերասան է», կամ թէ գու-



ցէ հէնց իրենք են երազով, որ ապագայում կարող են գերասան դառնալ ու լաւ հոշակ վայելիլ—սխալում են, թող յիշեն հայկական այն առածը, որ ասում է. «ճուտը ձուռ մաշուր կըլի»:

Բեմի վրայ փայտի կտորի նման կանգնած՝ յուշարարի խօսքերը կրկնելով՝ եթէ մարդիկ գերասաններ դառնային, ապա թուլակները ամենայայտնի գերասանուհիները պիտի համարուէին աշխարքիս երեսին, քանի որ նրանք էլ են մեր ասածները կրկնում:

Իսկ եթէ պ. պ. բեմաստիկներն են աշխատում այդ փայտի կտորներից հայ ազգի համար գերասաններ գատարաստել, միթէ մի քանի փորձից չեն նկատում, որ սխալում են, եթէ փայտի կտորներից կարելի լինէր գերասաններ պատրաստել—Արամազդը կը հրամայէր և անտառների բոլոր ծառերը մարդիկ կը դառնային:

Վերջերս պ. Արմէնեանի բեմաստիկներն օրով, Զուրաբովի անուան ժողովրդական տանը բեմի վրայ աւելի ու աւելի են նկատելի լինում այդ փայտի կտորներից. ինչպէս երևում է պ. բեմաստիկը նրանց խաթրին չդիպչելու համար է դրանց բեմ հանում, առանց մտածելու, որ այդպիսով հանդիսականների ճաշակն ու դէպի թաարոն ունեցած եռանդն է կորցնում:

Բեմաստիկը իր շահերը աչքի առած ունենալով, երբէք չի ասի, «պարոններ, ձեր աչքի վերև ունք կայ», քանի որ ինքը նոյն պարոնների կողմից է հրաւիրւած, որոնք կարող են վաղը կամ միև օրը մի ուրիշին հրաւիրել, ինչպէս որ քաղաքագլուխը իրեն ընտրող վարչութեան անդամներին նոյն բանը չի ասի. ուրեմն ինչո՞ւ չեն մտածում իրենք, այդ բեմաստիկների բանալիներով լարւած իզրուշկանները, կամ ինչո՞ւ չեն խնայում իրենց երիտասարդութիւնը և քանի գեռ ու չէ բեմը չեն աղատում իրենց ներկայութիւնից ու մի այլ գործի կաշուս:

Բախո



ՆԱՌՆՆՉ ՄԱՐԿԿԱՆՑ

Փախէ՛ք ինձանից, նենգամիտ մարդիկ, Ձեր խօսք ու ծիծաղ թո՛յն են ինձ համար. նախանձ մտքերին ատու՛մ եմ սաստիկ— Դարշանք եմ թափում ձայնով վշտահար:

Կորէ՛ք աչքիցս չարկամ լեզուներ,— Դուք կարող էք լոկ խածել ու խայթել.— Ո՛հ, լսի՛ր զմարդիկ, գիշատի՛չ անզղեր, Դուք քծնո՛ղ էք միայն, բայց գիտէ՛ք շանթիւնը...

Ես ձե՛զ եմ սիրո՛ւմ քարճարքե՛րձ լեռնե՛ր, Ձե՛զ, իմ խնկած-հոգու միակ հանգրւան. Ձեր մարմանդ հովով ուզում եմ հարքե՛լ Ու ցա՛ւս մոռնալ յաւերժ, յսխտեա՛ն...

Հեռու ինձանից կեղծաւոր մարդիկ, Ձեր բամբասանքը ինձ հանգիստ չի տայ, —Ես կուզեմ՝ լերան բուրմունքը՝ քաղցրիկ, Ապրիլ գազաթի՛ն, ուր նախանձ չկայ...

Նարգիլ



ՀՈՍՀՈՍԻ ՆԱՄԱԿԸ

Յարգելի անձանթ օրիորդ!

Աս բանին մէջ, զինքս զիս մեղաւոր կը ճանչնամ:

Մանկ համակով մանչ մը, փափաքի ծանօթանալ օտար ազգի մը հետ. շատ ամօթ կը համարեմ զիս: Ասանկ վարելուս համար ներողամիտ կըլլաք:

Թիֆլիս գալով ուղեցայ զիս կողակից մը գտնիմ: Ատ մտքի համար, գացի Մուշթէիթ պողչան, գացի սապրան, թատրոն, հոն ալ շատ ազդիկներու նայեցայ. հըմը, հէջ մէտեղ մը չտեսայ սրտիս դուրեկան մէկ աղւոր ազգիկ մը:

Սիրտս օր մը ուղեց ազգային թերթերէն կարդալ: Գացի Կով. Հայոց Բարեդ. Ընկ. գրատունը. հոն տեսայ քեզի. ատոր համար կաղաչեմ կոր. էկուր ծանօթանանք մէկս մէկու հետ: Կը երգեմ Աստուծոյ անուսով, որ իմ փափաքն է՝ քեզի կողակից ընել: Ես շատ կը փափաքեմ, որ դուք ըլլաք իմ կողակիցը, անոր համար որ՝

- Դուք ընթերցասէր օրիորդ մըն էք:
- Ես ալ ընթերցասէր երիտասարդ մըն եմ:
- Դուք Յովնանեան դպրոց կուսիք:
- Ես ալ ուսել եմ Ազգային վարժարանը:
- Դուք սիրունատեսք էք:
- Աս ալ իմ միակ փափաքս է:
- Ձեր կազմածքը աղէկ է:
- Աս ալ սրտիս սիրածն է:
- Ձեր բոլը սանկ աղւոր մըն է...
- Ատիկա ես մոմով կը փնտրէի:
- Ձեր հայրը հարուստ է:
- Աս ալ իմ երազածս է:
- Դուք Կովովիների վրայ հեջ չէք գրօսներ:
- Ես ալ ան կողմեր չեմ գրօսներ:
- Դուք մութն ընկնելուն պէս տուեր կըլլաք:
- Ես ալ ատ վախար հեջ դուսը չեմ կենայ:
- Դուք հէջ մի քաւալեր մալ չունիք:
- Ես ալ տամա մը չունեմ, ու անպէս կարօտ իմ կոր:

Ասանկ մէկ-մէկու դէմ քւիտ կըլլանք, կըմնա, որ աս նամակիս պատասխանը թէզմ գրես լիննա: Ինքս իմ ձեռք կուտամ նամակս, անանք ալ դուք ձեր փափուկ ձեռքով նամակ մը տաք ինձի:

Ձեր ոտքերուն գարշապարը պագնող, ձեր հոգին սիրող ու Ձեր պատուական նամակին սպասող մանչ՝ Կարօ:

Գտաւ և հրատարակեց՝ Աւարդի-վուօ

38-ն յունար ՅԳԿԻԹ ՅԳԸԸԸԸ  
Ս.ՋԵՒՄԵԾՍԻ ԵՒ ՓՅԵԳՆԵՐԻ ԳԵՂԵՍԻ  
ԴԱՍՊԱՐ ԷՖԷՆՏԻ

Աս գրածներս կարգալով, գիտեմ, դուք ձեզի պիտի որ ըսէք, թէ աս «հոստոսը ինչեր դուս տւած է»: Աստեղ, Գասպար Էֆէնտի, ոչ «հոստոսութիւն». կայ, ոչ ալ «ոնցոնցութիւն», այլ պարզապէս պատմութիւն մը, որ ականջովս լսած եմ մեր պապերէն: Ահա ատ պատմութիւնը:

—Հնդկական պատմագիր մը կը պատմէ. անգամ մը, Աստուած տեսնալով՝ մենակութիւնն այնքան ալ բան չէ, ուղեց, որ մարդ մը ստեղծէ իր պատկերին պէս: «Եկուր, ըսաւ, հոգէն մարդ մը շինեմ, որ բոլոր տեսողները զարմանան»: Ու ափ մը հող վերցուց գետնէն: Բայց տեսնալով որ հողը կաշտուութիւն չունի և որքան ալ կը սրորէ ափին մէջ, իրար հետ չի գանգալի, «աս չեղաւ, ըսաւ, եկուր ջուրէն շինեմ»: Ու ափը քիչ մը ջուր լեցուց: Թէպէտ և ջուրը հողին պէս չէր, բայց որքան ալ սրորեց, որքան ալ աշխատեցաւ՝ ճար չեղաւ. ջուրն ալ հողին պէս իրար հետ չգանգալելով՝ ափէն վար թափեցաւ: «Ծճ, աս ալ չեղաւ, եկուր՝ հորէն շինեմ» ըսաւ ու խկոյն ձեռքերը խոթեց կրակին մէջ: Բայց կրակը չի կրցաւ բռնել ու ձեռքերը վառեցան: «Եթէ օդէն շինեմ, աս անգամ անպատճառ կըլլա» ըսաւ ու ուղեց օդը բռնել: Բայց տես՝ որ օդն ալ ոչ կը տեսնուի, ոչ կը բռնուի, ոչ ալ մէկ տեղ մը կը մնայ, ալ աս ու ան կողմը կը վազէ շարունակ: «Աս ալ չեղաւ» ըսաւ Աստուած ու ինկաւ խոր մը տաժմունքներու մէջ: Սկսաւ մտածել՝ թէ ինչպէս ընէ, որ մարդ մը շինէ: Մէյ մըն ալ նայեցաւ ու ատեսաւ, որ գետին հզրը հողն ու ջուրը իրար խառնել ու խմորի պէս դանդաւած մը գոյացուցեր են: Կտոր մը առաւ ատ գանգաւածէն ու ափին մէջ քիչ մը տրորելէն ետքը՝ տեսաւ, որ ասիկա իր գործին յարմար կուգայ: Ու Աստուած աս բանը տեսնալով անչափ ուրախացաւ. «Եկուր, ըսաւ, աս գանգաւածէն մարդ մը շինեմ»: Ու կաւին ու ջրոյն խառնուողէն մարդը շինեց: Աստուած տեսնելով որ կրակին տաքութիւնը ամեն թաց բան կը շորցունէ, ինքն ալ իր շինած մարդը դրեց կրակին հանդէպ ու շորչուց գայն: Վերջը օդն ալ շինած մարդուն բերնէն ներս փչեց ու կենդանութեան շունչ տաւ անոր ու անունը դրաւ Ադամ: Ու նա ուրախացած կանչեց. «Ահա ստեղծեցի կենդանի մարդ»: Ստեղծւած մարդը—Ադամ լաւ չի հասկացաւ աս վերջին բառը. ան կարծեց՝ թէ Աստուած ոչ թէ «մարդ» ըսաւ, այլ ընդհակառակը, այսինքն «գրամ»: Ու ան ատենէն մարդը սկսաւ դրամին ետէն վաղիլ: (Որովհետեւ «մարդ»-ը հակառակ կողմէն «գրամ» կը կարդացի):

Հիմա որ կըսեն թէ մարդուն մարմինը կազմւած է չորս տարրերէն—հողէն, ջուր-

բէն, հուրէն ու օգէն, սուտ չէ, միայն հաւասար չափով չեն գտնւիր անոր խառնածքին մէջ:

Ան մարդը՝ որ լուրջ է, քիչ կը խօսի ու շատ կը լսէ, անոր մարմնոյն խառնածքին մէջ հողին քանակութիւնը շատ է: Ան մարդը, որն հանդարտ ջուրի կընմանի ու ձեռքըն ինկածը ալ ազատելիք չունի, կը խեղդուի, անոր մէջ ջրոյն քանակը շատ է: Տաք զըլուէն, վառվառն ու կրակոտ մարդուն մէջ էլ հրոյն քանակը: Իսկ խելքէն արագ՝ ոտքէն բարակ մարդը, որ շուտ շուտ գոյնն ու կարծիքը կը փոխէ, անոր մարմնոյն խառնածքին մէջն ալ օդին—քամիին խառնուրդը շատ է:

Ու Աստուած Ազամին տարաւ գրախտին մէջ ու անոր ըսաւ. «Աս բոլոր բաները, որ գրախտին մէջ կը տեսնես—ծառ, ծաղիկ, բոյս, խոտ, կանաչ, ջուր, հովիտ, դաշտ, ձոր, լիւ և այլն, ասոնք բոլորը քուկդ են. հիմա բոլոր կենդանիները, գազանները, թռչունները, զեռունները, սողունները, ձուկերը և այլն, որոնց ամեն մէկուն յարմար անուն մը դնես քէֆդ ուզածին պէս»: Բոլորը եկան Ազամին առջևէն անցան: Ազամն ալ ամեն մէկուն իրեն յարմար անուն մը դրաւ: Մէկին անւանեց զայլ, միւսին—առջ, մէկալին—աղւէս, չորրորդին—բու, հինգերորդին—օձ, վեցերորդին—էջ, ու ալ ինչ երկարացնեմ, ամեն մէկուն իրեն յարմար անուն մը դրաւ: Սակայն Աստուած բան մը մոռցեր էր. եզը մտքէն հաներ էր, ու անոր համար ալ Ազամին առջևէն չանցուց, որ անուն մալ անոր դնէ: Մէյ մըն ալ տեսնաս՝ եզը գլուխը տնկած, պոչը խաղցունելէն, տոճիկ տալով եկաւ ու Աստուծոյ առջևը կայնելով՝ բառանչեց. «Հապա եզ (ես...) «Թող քո անունդ ալ «եզ» կանչեն», ըսաւ անոր Աստուած ու ճամբու դրաւ:

Գասպար էֆէնտի, աս պատմութիւնը գրելու ատենս միտքս բան մը ինկաւ, որ եթէ ձեզի ալ յայտնելու ըլլամ, ապահով եմ, որ հաւանութիւննիդ պիտի որ տաք անպատճառ: Չըլլամ, որ ձեր ամենակարող զօրութեամբը աշխարհիս ամեն կողմ գտնուող «Պաթարալայական» ազգայիններէն, ընդհանուր «Պաթարալայական-համազգային» ժողով մը հրաւիրէք, որ որոշի. սուսջին, — թէ մեր հոգևորականներուն, հրապարակախօսներուն, գրող-հեղինակներուն, ազգային գործիչներուն և խմբագիրներուն մարմնոյն խառնածքին մէջ չորս տարբերքէն որն աւելի շատ կը գտնուի հողը, ջուրը, օդը թէ քամին:

Քանի որ հիմա քանի մը սող բան գրողը ինքզինքը հեղինակ, գիրք շարագրող, բանաստեղծ. հրապարակախօս և այլն կանւանէ. ու ատոր համար ալ ուրիշ կարգ մը մարդիկ, որոնք երբեմն-երբեմն աս ու ան լրագրին երկու սող բան մը կը գրին ու ասոր անոր քէֆերուն ուզածին պէս կը հայհոյեն, որոնցմէ մէկն ալ է Կարսի յայտնի անյայտ պատգամաւորը, որն, «Հորիզոն»-ի

թիւ երրորդ համարին մէջ, քէֆն ուզածին պէս՝ լաւ մը հայհոյէր է Բերիկ հայր-սուրբին, «Սուրհանդակ»-ին թղթակցին և Մահտեսի-Համբարձում աղային, ատ կարգ մը մարդիկը, եզին պէս գլուխներին տնկած, կը պոսան, հա կը պոսան—«հապա մէնք, մենք ինչ անուն ունինք»: Քանի մը լրագրագետներ ալ վախնալով, որ չըլլայ թէ ատ մարդիկը յանկարծ ելլան ու գլուխներուն խաթէ մը ըլլան ու իրենց լրագրներուն վրաս մը հասցունեն, ատոր համար ալ կը ցանկան, որ ժողովի մը մէջ ատ մարդոց ամեն մէկուն, Ազամին ըրածին պէս, մէյ-մէկ յարմար անուն դրին ու իրենց լրագրներուն առաջին երեսին վերի մէկ կողմը «խոշոր գիրերով» տպին ի շարս վեհագունեց երևելի ընտիր հայկազանց տանս Թորգոմայ, ի պարծանս համայն հայութեան:

Ատ վերոյիշեալներուն ալ մէյ-մէկ յարմար անուն դնել, իրենց արժանեացը համեմատ, և հրամայել լրագրագետներուն, որպէսզի վերջիններս «խոշոր գիրերով» տպեն ատոնց անունները իրենց լրագրներուն մէջ անյայտաբար:

Ժողովի տեղւոյն, նախագահին ու քարտուղարին, որոնց ընտրելու մասին ալ կը յայտարարուի իր ժամանակին, երբ այդ հարցը լաւ մը կը ծեծուի մեր լրագրներուն մէջ:

Լաւ միտք է չէ, Գասպար էֆէնտի: Ատոր ինչ կըսէք:

Մնամ ձեր շուտափոյթ կարգադրութեանը սպասող՝ Ձեր Ազնւամեծարութեանը վստահատուի սպասուոր՝

Թորոս Կոնիկեան



### ՄԵՐԴԵՐ, ԿԻՆԸ ԵՒ ԺԱՄԱՍՏՈՅԸ

Յրատական փոքրիկ եղբարխաղ երկու արարածով:

Գործող անձինք. Նա, Նէ և Ժամաստոյցը.

Արարած ստալին. ԳիՇՆԵՐ

Ամուսինների ննջարանը: Կէս գիշերից անց: Դուռը բացուում է, շէմքում յայտնուում է Նա, կոնծած, երբարլով և աշխատում է գաղտնագողի կերպով անցնել... Բարձրանում է աղմուկ:

—Յովհաննէս, այդ դձեւ ես,—բացականչում է Նէ...:

—Եսս եմ, սաիբիլիս... ես...:

—Ա՛խ, վերջապէս եկար... Իսկ ես շատ վատ եմ գգուում ինձ... այնպէս վատ... Ժամի քանիսն է:

—Տասնութմէկն է, հոգեակս, տասնութմէկը...:

—Ես այնպէս տկար եմ...:

—Ի՞նչ է պատահել քեզ, սիրելիս... Գընամ բժիշկ կանչեմ... ԳՐԱՄՈՅԵՅՈՒ

—Ո՛հ, սաստիկ գլխացուցումով, ջրէրս... Օ՛, գլուխս տրաքում է... Օ՛-ճ-ճֆ... Ամեն բան զրգոտ է ինձ... Ամեն բան... Ինչո՞ւ կօշիկներդ այդպէս թխթխկացնում ես...:

—Ո՞վ է թխթխկացնում... Ես...:

—Ո՛հ, գլուխս, քունքերս... Ո-հ-հ: Եւ այդ անիծեալ ժամացոյցը սեղանատնում... նրա ձայնից ես կը խելագարւեմ... դնս իսկոյն և կանգնեցրու ի սէր Աստուծոյ...:

Մարդը գնում է և շուտով վերադառնում:

—Կանգնեցրի, հոգեակս... հանդարտելի...:

—Դէ՛հ, շուտ պառկելի:

Մարդը՝ ուրախացած, որ պրծաւ սպասելիք յանդիմանութիւնից, պառկում է և իսկոյն բաղբը քուն մտնում:

Արարած երկրորդ. ՅՆՐՆԿ:

Թէյը սեղանի վրայ: Կնոջ դէմքը գունաթափ, կանաչաւուն... Ներս է մտնում ամուսինը՝ ուրախ, քաջառոյգ...:

—Բարի լճյս, հոգեակս: Բարի լճյս, հնեշտակս...:

—Ես ձեր ոչ հոգեակը, և ոչ էլ հրեշտակն եմ...:

—Այդ ի՞նչպէս, սիրելիս...:

—Դձեւք, ամենազգելիք՝ զբոսամուկ մարդն էք... դուք... դուք... երէկ քանիսին տուն եկար:

—Տասնութմէկին, հոգեակս... գլխիդ ցաւե...:

—Լսեցէք: Տասնութմէկին: Նեղութիւն կրէք, անպիտան արարած, նայելու ժամացոյցին՝ թէ երբ էք այն կանգնեցրել:

Մարդը նայում է պատի ժամացոյցին... Սլաքները կանգնած են 3<sup>1</sup>/<sub>2</sub>-ի վրայ:

Մի սքանչելի տեսարան:

Վարսագոյր:

Եւեթև



### ԼԵՒ ՏՈՂՍՏՕՅԻ ՄՏՔԵՐԻՅԸ


(Կեանքի եւ մարդկանց մասին)

Աղքատ մարդիկ դուրկ չեն խելքից, ինչ է թէ աղքատ ես. նրանք էլ են իսկ և իսկ մեզ նման մտածում:

Որպէսզի իւրաքանչիւր մի մարդ կարողանայ գործել, պէտք է իր գործունէութիւնը լաւ և կարևոր համարէ: Եւ զոր համար մարդ ինչ տեսակ զբոսութեան մէջ էլ լինի, նա անպայման կը կազմէ իրեն համար այնպիսի հայեցակէտ առհասարակ մարդկային կեանքի նկատմամբ, ըստ որում նրա գործունէութիւնը կը կրկնայ լաւ և կարևոր:


Լինում են ըրողներ, երբ ապագան ներկայանում է մարդուն այնքան մոայլ գոյնով, որ նա վախենում է կենտրոնացնել





—Այ, ինչ կասեմ, մեր ժամանակ ով էր լսել ու տեսել «Ազատ սիրոյ լիզաներ», ո՛ւմը ուզում ես սիրի՞ր—բայց մի ս.սիր, ինչ է. պէտք է թմբկահարենք. երբ ես պսակեցի, լուսարոզի ամուսինս հրճանքի մէջ էր...

Հ Ա Յ Կ Ա Ն Ե Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Ո Ւ Մ Ե Ն Ե Ր



—Այ, ինչ լաւ կրիներ, եթէ մեզ էլ նպաստ տար յարգելի Ալեքսանդր Իվանիչ Մանթաշեանը... Աստուծ վկայ որ ամեն օր հայերէն ներկայացում լինէր էլի կրգայինք.  
 —Այ, ի հարկէ պիտի տայ, բան ու գործներս թողել եկել ենք, ինչ իսարար է... նպաստ էլ պիտի տայ ու դեռ մի բան էլ ստել—մենք որ չգանք դատարկ թատրոնում խոմ չեն ներկայացնելու. մենք էլ ազգասէրներ ենք.

նրա վրայ իր մտաւոր հայեացքները, այլ և դադարում է նրա մէջ մտքի ողջ գործունէութիւնը և աշխատում է մարդս ինքն իրեն համոզել, որ ապագայ չի լինելու և անցեալ չէ եղել:

Ամաչկոտ մարդկանց տանջանքը առաջ է գալիս իրենց մասին կազմած այլոց կարծիքի անյայտութիւնից. բայց հէնց որ միայն այդ կարծիքը բացորոշ արտայայտուում է—ինչ տեսակ և լինի—տանջանքը վերջանում է:

**Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր**

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄ Է  
ՓՕՆ-ՊՕԼԵՑԻ

**Գ Ի Ի Ղ Ա Յ Ի**

**Բ Ի Ի Տ Ն Ե Ր Ը**

Դիմել՝ Գուտտենբերգ Թատարական Սեփարդ Թատարներ

Դիմել՝ Книгоиздательство и книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. И. Галстяну՝ Тифлисъ: 2-2

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

**ՄԱՐԿԱԿԱ**

կամպէիսն

Շ Բ Ե Ղ Կ Ա Ջ Մ Ո Վ	
1906 թ.	5 ր.
1907 թ.	7 ր.
1908 թ.	7 ր.
1909 թ.	7 ր.
1910 թ.	7 ր.

Հին համարները հատով թիֆլիսում 10 կոպ., թիֆլիսից դուրս 12 կ.: Դիմել՝ «Սաթարալա»-ի գրասենեակին:

Բացած է բաժանորդագրութիւն 1911 թ.

**„ԼՈՒՍԱՐԵՐ-ԱՐԵՒ“**

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ԵՒ ԲԱՂԱ.ԲԱԿԱՆ ԹԵՐԹԻ,  
որը լոյս է տեսնում  
Երեւոսքի հինգօսքի եւ օսքաթ օրեր  
ԲԱՃՆԵԳԻՆՆ Է

Եզրագրութիւն համար տարեկան 80 դրուշ  
վեց ամիսը 40 շրշ.  
Արտասահմանի համար տարեկան 15  
ֆրանկ, վեցամիսը 7,50 ֆրանկ:

Հասցէն՝ Administration du journal armenien „Loussaper-Arev“, B. P. 868, le Caire (Egypte): 5-5

Ցանանկարով մեր բոլոր բաժանորդներին ամենայն տեսակ բարեկամութիւնով և հուրդ ենք տալիս բաժանորդագրել և ամենօրեայ հայեցողութիւնը ամենամեծ ու օգտակար

**ՍՈՒՐՀԱՆԴԱԿ**

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագրին, որ դեկտեմբերի 1-ից հրատարակուում է ամեն օր, այն ուղղութեամբ և այն ծրագրով, որ ունեցել է սկզբնաւորութեան օրից և որը գոհունակութիւն է պատճառել ընտիր և բանիմաց հասարակութեանը:


«ՍՈՒՀԱՆԴԱԿ» տարեկան բաժնեգինն է 10 ր., կէս տարեանը 6 ր. Սակայն «ԽԱՔԱՔԱՂԱ»-ի բաժանորդներին համար պատրաստ ենք զիջել և տալ հետեւեալ զներով.

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“ եւ „ԽԱՔԱՔԱՂԱ“ միասին  
Տարեկան . . . . . 12 ր. © Երեք ամիսը . . . . . 4 ր. — կ.  
Կէս տարին . . . . . 7 ր. © Ամիսը . . . . . 1 ր. 50 կ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакция „Сурандакъ“, Հոսագրով Тифлисъ, „Сурандакъ“

**ОСПЕННЫЙ ТЕЛЯТНИКЪ**  
**ЖИВОПИСЦЕВА ВЪ Г. ОРЛЪ.**

ՄԱՂԿԻ ՀՈՐԹՈՒԿ. Դէտրիտի սրահը՝ 50 մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ. Խողովակի մէջ—5 մարդու համար—5 կոպ.: Մի բուրջուց պակաս—չէ վաճառուում: Ճանապարհածախի համար—30 կոպ.: Երեք բուրջուց աւելի ուղղին համապատասխան զեղջ մինչև 20 տոկոս, հասցէն. Օրբոլ բաղաբ, Մաղիկի Հորթուկ ժիլօպիսցի:



5-1

**„ԲԱՐԲԻՆ“**

Շ Ա Բ Ա Ք Ա Թ Ե Ր Թ Ի

որ լոյս է տեսնելու թիֆլիսում ներկայ փետրուարի 13-ից:

№ 1-Ի ԲՈՂԱՆԴԱՅՈՒԹԻՒՆԸ

1. Մեր շաբաթը—Գ. Տէր-Ղևոնդեանի, 2. Տղամարդացող կինը—Կլարա Նօր  
դէի, 3. Ծիծեռնակի երգը—Blaksmith-ի, 4. Բարեկամական խորհուրդ—Գէորդ  
Չէֆօնի, 5. Տարախօ-Սարախօ (վէպիկ գրպանահատների կեանքից) Գ. Տէր-  
Ղևոնդեան, 6. Մեկեր, I—Գէօ. Ղևօի 7. Փոստ-Նառոյի.

«ԲԱՐԲԻՆԸ» արժէ թիֆլիսում տարեկան 2 ր., 6 ամիսը 1 ր. 20 կոպ.,  
3 ամիսը 60 կոպ.: Թիֆլիսից րուրս, տարեկան 3 ր., 6 ամիսը 1 ր. 75 կ.,  
3 ամիսը 1 ր. թիֆլիսում՝ հատը 5 կ.:

«Խմբագրութիւնն ու գրասենեակը գտնուում են. Թիֆլիս, Михайловский  
пр. № 17—Վ. օրօնցովի արձանի մօտ և բաց են 6—8 ժամը երկրորեան.

Խմբագիր-հրատարակիչ՝ Գ. Տէր-Ղևոնդեան

0-3

**Открыта подписка на 1911 годъ**  
НА ДВУХНЕДЕЛЬНЫЙ ЖУРНАЛЪ

**Промышленность и Торговля**

органъ совѣта съѣздовъ представителей промышленности и торговли, выходящій 1-го и 15-го чиселъ каждаго мѣсяца.

Подписная цѣна: на годъ 12 р., на полгода—7 р., съ пересылкой и доставкой.

Адресъ: С.-Петербург, Невскій, 100.

10-6

**Բ Ժ Ի Շ Կ**

**Արտաշես Երևան**

վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը իր ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, Գանովսկայա փողոց № 15.

50-50

Բացված է 1911 թ. բաժանորդագրութիւն

„L N 3 U“

Գրական-Հասարակական շարաթափեր(Թի. (Մեկուորդ ասի).

„LNU“-ի բաժանորդագիրը.—ն. նախիջևանի, Ռաստովի ու շրջակայ հայ գիւղերի համար տար.-3 ր. կէս տ.-2 ր. 3 ամ.-1 ր.: Ռուսաստանի այլ տեղերի համար—տարեկ. 4 ր., կէս տար.-2 ր. 50 կ. և 3 ամ.-1 ր. 50 կ.: Արտասահ. տար.-6 ր. կէս տարին 3 ր. Համարն ամեն տեղ արժէ 10 կոպ.:

Հասցէն՝ Нахичевань н-Д. Въ редакцію армянск. журнала „ЛУЙСЪ“.

Միջոց-Տրատ. Բժ. Գէորգի Ռէիզեան.

МАГАЗИЪ

Композиція

Тифлисъ. Пушкинскіи пассажъ № 8

ГРОМАДНАЯ ЭКОНОМІА

ШВЕДСКАГО КОМПОЗИЦІОН. БЪЛЪА.

Носитсѣяне менѣе двухъ лѣтъ

Постоянный большой выборъ свѣжаго товара.

Воротниковъ, манишекъ и манжетъ.

по фабричнымъ цѣнамъ.

Передѣлка въ любой фасонъ бесплатно

Продюются портняжныя принадлежности, какъ-то пуговицы, подкладки, мѣлъ и впрочѣе.

Имѣется таоте галантерейный Отдѣлъ

00—31 М. А. КАЛТАКЯНЦЪ



Բացված է բաժանորդագրութիւն 1911 թ.

«ԱՐՇԱԼՈՅՍ»

Ազգային, գրական և քաղաքական, անկախ հայաթիւրթի,

որը լոյս է տեսնում շաբաթը մի անգամ 2որեքշաբթի օրերը:

Բաժնեգիրք է

Եղիպտոսի համար տարեկ. 40 եգ. ողջ. Արտասահմանի 10 ֆրանկ:

Թուրքիոյ գաւառներու Ազգ. վարժարանաց ուսուցիչներուն համար տարեկան 2 դրուշ. և արտասահ. 5 ֆրանկ:

Թերթը լոյս է տեսնում Եղիպտոսում:

Հասցէն՝ Redaction du journal armenien, "Archaloys", le Caire (Egypte): 5—5

Մամուլի տակ է եւ շտաով լոյս կուտեն ի

„ԿՌԱՆ“

Երգիծարանական ժողովածուն բաղկացած 300-ից աւելի մեծադիր էջերից: Գինն է մինչև լոյս տեսնելը 80 կ. Լոյս տեսնելուց յետոյ զոգլի կերպով կը բարձրանայ:

Դիմել՝ Эривань, Мушегу Багратуни. 10—5

Բ Ժ Ի Շ Կ

Ե. Ի. Միևստեանց

Ներքին և երեսայոց և ստամբուսա-աղիքային հիւանդութիւնների, պրոֆ. MATHIEU-ի մասնագիտական կլինիկայից Պարիզում:

Հնդուներութիւնը առ. 9—11 ժ. երեկ. 5—7 ժ.: Ելիզաւետինսկայա, 39: 100—60

Բ Ժ Ի Շ Կ

ՓԱՆՕ ՄԱՆԴԵՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻՉԱՍԵՌԱԿԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ:

Հնդուներում է հիւանդներ իր սեփ. տանը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28. 00—61



1911

1843

Կը բովանդակէ Ազգային, Բանասիրական, Գրական, Պատմական, Կենսագրական և այլ յօդուածներ:

Բազմակէպի ներքերը.—Անոնք, որ 1910 դեկտեմբեր 1—14-էն առաջ կը բաժանորդագրուին՝ յղելով միանգամայն 10 ֆր. 4 բուլլի.—2 արտար, 50 դանկան՝ իբր նէր պիտի ստանան, 2 ֆր. արժողութեամբ գիրք մը (բաժանորդաց կրկնը քրոց ցուցակը):

Բարեգործական հաստատութիւնք, Բնիկացիութիւնք, գիւղերու Ուսուցիչ Ուսանողք, Վարժարանք կրնան ամբողջ տարեկան Բազմակէպ ստանալ միայն 30 դանկան, 2 ր. 50 կ. 6 ֆրանկ յղելով:

Դիմել՝ Redaction de la Revue Bazmavp Venise (Italie): 5—4

1911

1843

Կը բովանդակէ Ազգային, Բանասիրական, Գրական, Պատմական, Կենսագրական և այլ յօդուածներ:

Բազմակէպի ներքերը.—Անոնք, որ 1910 դեկտեմբեր 1—14-էն առաջ կը բաժանորդագրուին՝ յղելով միանգամայն 10 ֆր. 4 բուլլի.—2 արտար, 50 դանկան՝ իբր նէր պիտի ստանան, 2 ֆր. արժողութեամբ գիրք մը (բաժանորդաց կրկնը քրոց ցուցակը):

Բարեգործական հաստատութիւնք, Բնիկացիութիւնք, գիւղերու Ուսուցիչ Ուսանողք, Վարժարանք կրնան ամբողջ տարեկան Բազմակէպ ստանալ միայն 30 դանկան, 2 ր. 50 կ. 6 ֆրանկ յղելով:

Դիմել՝ Redaction de la Revue Bazmavp Venise (Italie): 5—4



ԹԻՓԼԻՍՈՒՄ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԳԻՐԸՈՎ ԱՌԱՋԻՆ ԱՐԱԳԱՏԻՊ ՄԵՔԵՆԱՅԵՐ ԽՐՕՄՕ-ԼԻՏՕԳՐԱՓԻՆ

Ա. Ի. ԲԻԻՆՈՎԻ

(ԵՐԵՎԱՆԻ ԵԱԿԵԱՍԱ)

Գօլօվինսկի պրօսպեկտ, տուն Օրոյեայնի, տեղիֆօն № 433.

Յայտնում է ի գիտութիւն պ. պ. պատէր սուղներին, որ վիճազատունը ամբողջովին իմ սեփականութիւնը դառնալով, նշանաւոր չափով ընդարձակեց և աւելացաւ նոր կօնսուրուկցիայի և ամենամեծ դիրքի արագատիպ մեքենայով իր բոլոր օժանդակիչ պարագաներով: Այս հանգամանքն ինձ հնարաւորութիւն է տալիս պատէրները կատարել շուտ, ճշտութեամբ եւ ԱԻԵԼԻ էԺԱՆ միւս վիճազատաներից: ցանկանալով վիճազրական գործը կողմասում հասցնել իր արժանի ըարձրութեան, ես չեմ խնայելու ոչ մի ծախս, որպէսզի բաւարարեմ ժամանակակից տեխնիկային: Յոյս ունիմ, որ պ. պ. պատէր սուղները, առանց ուշադրութեան չեն թողնիլ վերև յիշածներս և կը պատեն ինձ իրենց պատէրներով, իսկ ես իմ կողմից ամեն ջանք գործ կը դնեմ բաւարարելու պահանջները:

10—3

Յարգանքներով—Ա. Ի. ԲԻԻՆՈՎ





Ժանտախտը Հեռուր Արեւելից

—Ինչ որ չկարողացան անել պատերազմները—հա մի անգամից կանեմ, որովհետեւ յոյս հետզհետէ փթթում է նրբարողը՞ վարդի նման: